ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

Ս. ԳՄԵԼԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԻՐԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Ռուսական իրականության մեջ Արևելյան Այսրկովկասի նկատմամբ հետաքրքրությունը ձևավորվել էր դեռևս ռուսական տարեգրությունների ժամանակաշրջանից: Իսկ ԺԵ-ԺԷ դարերում հիմք էր դրվել տարածաշրջանի նկարագրության գրական ժանրի ավանդույթին: Վաճառականներ Աֆանասի Նիկիտինի (ԺԵ դ.) և Ֆեոդոր Կոտովի (ԺԸ դ.) ճանապարհորդական նյութերն աղբյուրագիտական հպանցիկ տեղեկություններ էին հաղորդում Արևելյան Այսրկովկասի (Դերբենդի, Շամախիի, Բաքվի և այլն) և Հյուսիսային Իրանի բնակավայրերի էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Այդ ստեղծագործությունները կարճ տեղեկություններ էին տարածաշրջանի ժողովուրդների ավանդույթների, սովորույթների, կենցաղի մասին: Հեղինակները մանրամասն ներկայացնում էին իրենց ճանապարհորդության գրառումները՝ ուղեգրություններին հաղորդելով յուրատեսակ ձեռնարկ-ուղեցույցի բնույթ:

Տարածաշրջանի ուսումնասիրության պատմագիտական ավանդույթը ԺԸ դարի առաջին կեսին շարունակում են հետազոտողներ Ա. Վոլինսկին, Ի. Գերբերը, Ի. Լերխեն, իշխան Ա. Գոլիցինը և այլք: Իսկ դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի և Իրանի հյուսիսային շրջանների հետազոտությունը ստանում է ակադեմիական բնույթ: Այսպես, Ռուսական կայսրության և հարակից երկրների լայնամասշտաբ հետազոտությունների իրականացման, դրանց բնական պաշարների օգտագործումն ի նպաստ պետությանը ծառայեցնելու մասին Մ. Լոմոնոսովի (1711-1765 թթ.) առաջադրած թեզերը 1768-1774 թթ. կյանքի կոչվեցին ի դեմս Սանկտ Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական ուղևորությունների:

Ակադեմիայի այս նախաձեռնությունն անհրաժեշտ է դիտարկել ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրողությունների համատեքստում: Այսպես, ԺԸ դարի երկրորդ կեսին Այսրկովկասը, մասնավորապես նրա հյուսիս-արևելյան հատվածը, վերածվել էր ռուս-իրանա-օսմանյան ռազմաքաղաքական շահերի բախման թատերաբեմի: Պատմական այդ շրջանում ռուսական կովկասյան քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ Ռուսաստանի կառավարող շրջանակները ձեռնամուխ են լինում Կովկասը «ներսից» նվաճելուն: Ձևականորեն այդ արշավախմբերը կոչված էին ուսումնասիրելու Արևի սկավառակի առջև Վեներա մոլորակի հայտնվելու աստղագիտական երևույթը: Այդ նախաձեռնությամբ 1767 թ. մարտի 13-ին գրավոր առաջարկությամբ հանդես է գալիս Եկատերինա Բ կայսրուհին (1762-1796 թթ.)՝ դիմելով ակադեմիայի նախագահ կոմս Վ. Օռլովին[1]:

Գիտարշավի անդամների առջև դրված էր Ռուսական կայսրության և հարակից երկրների առավել ընդգրկուն, խոր ու համակողմանի ուսումնասիրությունը: Հետազոտությունների աշխարհագրական սահմաններն արևմուտքում Բեսարաբիայից և Վալախիայից ձգվում էին մինչև հյուսիս-արևելք՝ Սիբիրի երկրամաս, իսկ Սառուցյալ օվկիանոսից՝ Կասպից ծովի հարավային ափերը, Կովկաս և Իրանի խորքը:

Արշավախմբերի ձևավորման գործընթացը կազմակերպելու, դրանք անհրաժեշտ պարագաներով զինելու և երիտասարդ գիտական կադրեր ներգրավելու համար 1767 թ. Գերմանիայից Սանկտ Պետերբուրգ էր հրավիրվել անվանի գիտնական Պյոտր Պալլասը (1741-1811 թթ.)[2]: Արդեն 1768 թ. գարնանը Ակադեմիան ներկայացնում է արշավախմբերի վերջնական կազմն ու գործունեության ծրագիրը: Ստեղծվելու էր երկու այսպես կոչված «ֆիզիկական» արշավախումբ՝ Օրենբուրգյան և Աստրախանյան, իրենց ենթախմբերով: Առաջին արշավախումբը բաղկացած էր երեք ենթախմբից՝ Պ. Պալլասի, Ի. Լեպյոխինի, Ի. Ֆալկի ղեկավարությամբ, իսկ երկրորդ արշավախումբը ներառում

---

[1] Наблюдения явления Венеры в Солнце в российской империи в 1769 году учинением с историческим предуведомлением, сочиненным Степаном Румовским, СПб, 1771, стр. 5-6.

[2] Պ. Պալլասի գիտական ժառանգության մասին տե՛ս Научное наследие П. С. Палласа, Письма. 1768-1774 гг., сост. В. И. Осипов, СПб., 1993.

էր երկու խումբ՝ Ի. Գիլդենշտեդտի և Ս. Գմելինի[3] գլխավորությամբ[4]:

1768 թ. փետրվարի 4-ի՝ Սենատին տրված կայսերական հրամանագրում ակադեմիայի կազմակերպած արշավախմբերի ձևավորման նպատակների «աստղադիտական դիտարկումների» մոտ նշվում էր պետության «բնական պատմության» ուսումնասիրության անհրաժեշտությունը[5]: Արշավախմբերը պարտավոր էին խստորեն հետևել սահմանված ժամանակացույցին և գործերին ներկայացված ծրագրի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտ էր ուսումնասիրել այցելած երկրների բնական պայմանները, դրանց տնտեսական նշանակությունը հողագործության և արդյունաբերության համար: Պահանջվում էր նկարագրել, մոդելավորել կամ գծագրել աշխատանքային գործիքները: Արշավախմբերը պետք է հավաքագրեին տեղի ժողովուրդների արհեստների, զբաղվածության (ձկնորսության, մեղվապահության, մետաքսագործության, որսորդության) վերաբերյալ նյութեր: Անհրաժեշտ էր այցելած երկրների ընդերքի, բնական հանածոների, բուսական և կենդանական աշխարհի, բնակլիմայական պայմանների մասին տեղեկություններ հավաքել: Ուսումնասիրության առանձին առարկա էին դառնում այցելության վայրերում ապրող ժողովուրդների կենցաղը, սովորույթները, ավանդույթները, առասպելները, հանդիպող հիվանդությունների նկարագրությունը և դրանց բժշկության եղանակները, ժո-

---

[3] Ազգությամբ գերմանացի, բժշկի որդի, 1733-1743 թթ. Սիբիրի հետազոտող, բնագետ և քիմիկոս Յոհան Գեորգ Գմելինի զարմիկ Սամուիլ Գոտլիբ Գմելինը (Gmelin, Samuel Gottleb Georg) ծնվել էր 1745 թ. Թյուբինգեն քաղաքում: Նա 1763 թ. ստանում է բժշկական գիտությունների գիտական աստիճան և ճանապարհորդում դեպի Ֆրանսիա և Հոլանդիա: Սակայն 1767 թ. Ս. Գմելինը հրավիրվում է Սանկտ Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիա՝ հավանաբար իր նշանավոր հորեղբոր գործը շարունակելու համար: Արդեն ապրիլի 4-ին նա ընտրվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Իսկ Թյուբինգենի համալսարանը Ս. Գմելինին շնորհում է քիմիայի պրոֆեսորի գիտական կոչում (1772 թ.):

[4] История российской академии, Соч. И. М. Сухомлинова, вып. 2, СПб., 1875, стр. 64.

[5] Наблюдения явления Венеры в Солнце в российской империи в 1769 году учинением с историческим предуведомлением, сочиненным Степаном Румовским, СПб, 1771, стр. 25.

ղովրդական դեղամիջոցները: Պահանջվում էր ուսումնասիրել և մանրամասն նկարագրել հնավայրերում հանդիպող ավերակներն ու դրանց մնացորդները[6]: Արշավախմբերին իրենց դիտողություններն ու առաջարկություններն էին ներկայացրել նաև Տնտեսական ազատ ընկերակցությունը, Բժշկական, Բերգ և Կոմերց կոլեգիաները:

Աննախադեպ համարվող այս նախաձեռնությունը գտնվում էր կայսերական իշխանության բարձր հովանու և ուշադրության ներքո: Նախքան ճանապարհորդության մեկնելը Սամուիլ Գոտլիբ Գմելինի արշավախումբը կոմս Ի. Օռլովի ուղեկցությամբ ներկայանում է գահաժառանգ և մեծ իշխան Պավել Պետրովիչին[7]: Պետությունը որպես անվտանգ փոխադրամիջոց նավ էր տրամադրել նրանց, իսկ որպեսզի Իրանում[8] տեղի խաներն իրենց ինչպես հարկն է ընդունեին, և «Ռուսաստանի պատիվն ըստ արժանվույն գնահատվեր», կայսրուհու անունից Աստրախանի նահանգապետին հրամանագիր էր տրվել: Բացի դրանից, «պարսից խաներին» և Էնզելիում ու Սալիանում գտնվող ռուսական հյուպատոսներին երաշխավորագրեր էին ուղարկվել[9]:

Ս. Գմելինը կարևորում էր ճանապարհորդության նշանակությունը կայսրության շահերի համար: Այդ մասին նա գրում է աշխատության առաջին հատորի նախաբանում՝ Եկատերինա Բ կայսրուհուն հասցեագրված ուղերձում: Նա հույս ուներ «բացահայտելու այդ երկրների անհայտ բնական հրաշքները, որոնք մինչ այդ անհրաժեշտ ուշադրության չէին արժանացել»[10], և նշում էր, որ հանուն ուղևորության գլխավոր նպատակի (իմա՛ պետական շահի) պետք է դիմանալ բոլոր դժվարություններին[11]:

---

[6] Фрадкин Н. "Инструкция для академических экспедиций 1768-1774 гг. Вопросы географии". Сб. 17, Москва, 1950, стр. 216-217.

[7] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть I, СПб., 1771, стр. 1.

[8] Իրանական պետության տարածք էր ընկալվում նաև ողջ Այսրկովկասը, որի խաներին (Ղուբայի և Դերբենդի, Բաքվի) նույնպես երաշխավորագիր-նամակներ էին տրվել:

[9] Гмелин С., նշվ. աշխ., էջ 4:

[10] Гмелин С., նշվ. աշխ., մաս I, 2-րդ հրատ., Ս.-Պ., 1806, էջ III:

[11] Гмелин С., նշվ. աշխ., մաս I, Ս.-Պ., 1771, էջ 77:

1768 թ. հունիսի 26-ին Ս. Գմելինի արշավախումբը Սանկտ Պետերբուրգից ուղևորվում է երկարատև ճանապարհորդության: Ս. Գմելինի արշավախումբը հետևելու էր խիստ սահմանված ժամանակացույցի՝ հետազոտելով Կասպից ծովի արևմտյան ափերը: Ըստ երթուղու՝ արշավախումբը մայիս ամսին ուսումնասիրելու էր Աստրախանից Թերեք ընկած տարածքը, իսկ հունիսին՝ Թերեքի հունից մինչև Դերբենդ հատվածը: Այնուհետև հուլիսին արշավախումբը պետք է լիներ Դերբենդի և Բաքվի միջակայքում, ապա օգոստոս-սեպտեմբերին ուղևորվեր Բաքու-Ռեշտ-Աստրաբադ ուղեգծով: Հոկտեմբերին Ս. Գմելինը պարտավոր էր վերադառնալ Կովկաս և ակադեմիկոս Ի. Գիլդենշտեդտի արշավախմբի հետ հեռանալ Ղզլար[12]:

Արշավախումբն Այսրկովկասում էր հայտնվել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, և անձնակազմի կյանքը վտանգված էր: Ս. Գմելինի՝ դեպի Իրանի խորքերը նախապատրաստվող արշավանքի մասին բացասական էր արտահայտվում ակադեմիկոս Պ. Պալլասը 1770 թ. պրոֆեսոր Գ. Միլլերին գրած իր նամակում: Նա Ս. Գմելինի «վրացական» ճանապարհորդությունն ավելորդություն էր համարում՝ նշելով, որ ոչ մի նոր բացահայտում այդ տարածքներում չարժե այն մեծ վտանգը, որին ենթարկվում է արշավախումբը[13]: Իսկապես, Կովկասի և Դաղստանի ցամաքային ճանապարհներով շրջելն անվտանգ ձեռնարկումներից չէր: Այսպես, Դերբենդի խանի շրջապատում գտնվող հայերն անընդհատ Ս. Գմելինին զգուշացնում էին, որ խանն իրեն որպես ռուսական լրտես է դիտում[14]: Իրոք, այսրկովկասյան և դաղստանյան տիրակալներն ու խաները մեծ կասկածանքով էին վերաբերվում Ռուսական կայսրության բարեկամության մասին հավաստիացումներին: Այդ տրամաբանության մեջ է պետք դիտարկել նաև Դերբենդի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի՝ արշավախմբին ցուցաբերած ընդունելությունը: Այսպես, երբ Ս. Գմելինը

---

[12] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть III, половина I, СПб., 1785, стр. 2-3.

[13] Научное наследие П.С. Палласа. Письма. 1768-1771 гг., Составитель В. И. Осипов, СПб., 1993, стр. 111.

[14] Гмелин С. "Путешествие по России для исследования трех царств естества", часть III, половина I, стр. 44.

Ֆաթհ Ալի խանին է հանձնում Աստրախանի նահանգապետի երաշխավորագիր-նամակը, ապա կարդալու ընթացքում կայսերական տիտղոսը հիշատակելիս խանը ոտքի է կանգնում և խոնարհվում[15]: Մյուս կողմից, նա հրաժարվում է արշավախմբին ձիեր տրամադրել, որպեսզի ցամաքով Դերբենդից Բաքու ուղևորվեն՝ վախենալով, որ այդ կերպ նրանք հնարավորություն կունենան տարածքի մանրակրկիտ ուսումնասիրություն կատարելու: Ըստ այդմ, «պարսիկները» գտնում էին, որ ինքը ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այցելել է տարածաշրջան՝ ոչ թե գիտական ուսումնասիրություններ կատարելու, այլ տեղանքը զննելու համար: Ավելին, ճանապարհորդության վերջում Ֆաթհ Ալի խանը Ս. Գմելինին հայտնում է, որ նրա «բույսերի հավաքումն» ամբողջությամբ կեղծիք է[16]՝ ակնարկելով արշավախմբի քաղաքական նպատակների մասին:

Արշավախումբը բացահայտ թշնամական վերաբերմունքի է արժանանում Բաքվի խանի կողմից[17]: Վերջինս, երբ տեղեկանում է, որ Ս. Գմելինը նավթահորեր է այցելել, հարցնում է նրան, թե արդյո՞ք օտարերկրացուն Ռուսաստանում թույլ կտային տեսնել նման բաներ: Իր այցի իրական նպատակները բացատրելու ակադեմիկոսի բոլոր փորձերն էլ անհաջողության են մատնվում: Ս. Գմելինը Բաքվում գտնվելու ողջ ընթացքում իր կացարանի (վրանի) շուրջը մշտապես պտտվող մարդկանց է նկատում, որոնք հետևում էին, թե արշավախմբի անդամներն ինչ են բերում իրենց նավ և ինչ են տանում նավից[18]:

Նմանատիպ խոչընդոտների Դաղստանում Թարքիի շամխալից հանդիպել էր նաև ակադեմիկոս Ի. Գիլդենշտեդտի արշավախումբը 1770-ական թվականներին [19]:

Այսպիսով, Ս. Գմելինը հստակ պատկերացում ուներ տեղի տիրակալների, այդ թվում՝ Ղարաղայթաղի ուցմիի[20] քաղաքական դիրքո-

---

[15] Նույն տեղում, էջ 11:

[16] Նույն տեղում, էջ 42-44, 109:

[17] Նույն տեղում, էջ 61, 62:

[18] Նույն տեղում, էջ 77:

[19] Гюльденштедт И. "Географическое и статистическое описание Грузии и Кавказа, из путешествия через Россию и по Кавказским горам в 1770–1773", СПб., 1809, стр. 116-117.

որոշման մասին: Իրանից վերադարձի ճանապարհին 1774 թ. Փետրվարի 5-ին Դերբենդից քիչ հեռու արշավախումբը 20 կազակների ուղեկցությամբ գերի է ընկնում Ղարաղայթաղի տիրակալի՝ Ամիր-Համզա ուցմիի մոտ: Ս. Գմելինը, հաշվի առնելով Դերբենդից Ղզլար ընկած տարածքի վտանգավորությունը, դեռևս հունվարի 5-ին Բաքվից Ղզլարի պարետ Ի. ֆոն-Շտենդերից լրացուցիչ զինվորական ուղեկցություն էր խնդրել: Պահանջվող զինվորների քանակն ակադեմիկոսը թողնում էր պարետի հայեցողությանը[21]:

1774 թ. մարտի 7-ին Աստրախանի նահանգապետի գրասենյակից Ի. ֆոն-Շտենդերին կայսերական հրաման են ուղարկում՝ հանձնարարելով ուցմիից պահանջել ազատ արձակել արշավախմբի անդամներին և չխոչընդոտել Ս. Գմելինի ուսումնասիրությունները: Մյուս կողմից, ռուսական իշխանություններն ուցմիի և նրա մերձավորների համար նվերներ էին պատրաստել[22]: Միաժամանակ Ղարաղայթաղի տիրակալի հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող Ղուբայի և Դերբենդի Ֆաթհ Ալի խանին և դաղստանյան որոշ տիրակալների կայսրուհին նամակներ է ուղարկում՝ խնդրելով հանդես գալ միջնորդի դերում[23]: Ղզլարի պարետ Ի. ֆոն-Շտենդերին 1774 թ. Ապրիլի 8-ին գրած նամակում գեներալ Ի. դը Մեդեմը հանձնարարում էր, որ եթե դաղստանյան տիրակալներին չհաջողվի ազատել գերությունից Ս. Գմելինին, ապա տիրակալներից ոմանց տանել Ղզլար և պատանդ պահել[24]:

Ս. Գմելինը Ի. ֆոն-Շտենդերին ապրիլի 20-ին ուղարկած նամակում մանրամասն վերլուծում էր Դաղստանի և Արևելյան Այսրկովկասի

---

[20] Ղայթաղի կամ Ղարաղայթաղի ուցմիությունը Դաղստանի ԺԸ դարի ազդեցիկ տիրույթներից էր, իսկ նրա տիրակալի՝ ուցմիի նստավայրը Մաջալիս բնակավայրն էր: Ուցմիության էթնիկ պատկերն աչքի էր ընկնում իր բազմազանությամբ. ղայթաղներ (դարգիններ), թաթեր, լեռնային հրեաներ, կումիկներ և այլն:

[21] Академик Гмелин. Русский архив. Москва, 1912, N 9, стр. 69. Ի դեպ, նրա բանագնացը Ղզլարի բնակիչ Ռուստամ անունով մի հայ էր:

[22] Академик Гмелин, стр. 70-72.

[23] Նույն տեղում, էջ 71:

[24] Նույն տեղում, էջ 74:

խաների հարաբերությունները: Ակադեմիկոսը թախանձագին խնդրում էր «ինչ-որ կերպ» ազատել իրեն, քանի որ ո՛չ միջնորդ տիրակալները, ո՛չ էլ ուցմին պատրաստ չեն զիջումների: Ավելին, Ս. Գմելինը զարմանքով նշում էր, որ իրեն պարբերաբար կեղծ լուրեր են փոխանցում, թե իբր թուրքերը գրավել են Ղրիմը, Մոզդոկը, Ղզլարը և Կազանը[25]:

Ռուսական իշխանությունների անվճռականությունը ստիպում են Ս. Գմելինին Ի. ֆոն-Շտենդերին հուսահատ նամակ գրել: Նա ուղղակի մեղադրում էր Ի. ֆոն-Շտենդերին Դերբենդից Ղզլար ցամաքային ճանապարհի վտանգի մասին իրեն չզգուշացնելու մեջ, որի դեպքում արշավախումբը կվերադառնար Բաքու, իսկ այնտեղից նավով կմեկներ Ռուսաստան[26]: Պրոֆեսորը նշում էր, որ Ղզլարի պարետն իր գործով սկսել է զբաղվել այդ մասին լուրը ստանալուց միայն երեք շաբաթ անց[27]:

Ակադեմիկոսին գերությունից ազատ արձակելու համար տարվող բանակցությունները ձգձգվում են կես տարով, և 1774 թ. հուլիսի 27-ին Ս. Գմելինը տենդից մահանում է: Սակայն հասցնում է ճանապարհորդական իր գրառումները փոխանցել գերությունից ազատ արձակված արշավախմբի անդամներից ուսանող Իվան Միխայլովին և թարգմանիչ Ֆեոդոր Բաուրին, որոնք դրանք փոխանցում են Ակադեմիայի հանձնաժողովին:

Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի արխիվի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում է գտնվում Ս. Գմելինի անձնական արխիվային ֆոնդը, որտեղ պահպանվում են Ի. Միխայլովի «Ակադեմիկոս Ս. Գմելինի գլխավորած 3-րդ ֆիզիկական կոչվող արշավախմբի՝ Աստրախանի երկրամաս և Կովկաս կատարած ուղևորության մասին» զեկուցագրերը[28]:

Ակադեմիայի հանձնաժողովին Ի. Միխայլովի և Ֆ. Բաուրի՝ 1774 թ. օգոստոսի 3-ին Ղզլարից գրված «Կովկասյան լեռնական մի

---

[25] Академик Гмелин, стр. 74-75.

[26] Նույն տեղում, էջ 76, 77:

[27] Նույն տեղում, էջ 76:

[28] Рапорты студента переводчика Ивана Михайлова о 3-ей „физической экспедиции'' акад. С. Г. Гмелина в Астраханский край и на Кавказ, 1774-1775 гг., СПФ АРАН, Ф. 3, Оп. 34, д. 32, лл. 1-41.

տիրակալի մոտ գերության մեջ ակադեմիկոս Ս. Գ. Գմելինի մահվան մասին» զեկուցագիրը հրատարակվել է 1867 թ.[29]: Փաստաթղթից պարզ է դառնում, որ Ղարաղայթաղի ուցմին ռուսական իշխանություններից պահանջում էր տարիներ առաջ Դաղստանում ռուսական հովանավորության տակ գտնվող մուսուլման տիրակալների մոտ փախած մի խումբ գյուղացիների վերադարձը կամ 30 000 ռուբլի փոխհատուցում: Զեկուցագրից հայտնի է դառնում, որ այդ ժամանակ Կովկասում գտնվող գեներալ-պորուչիկ դը Մեդեմի «ձեռքերն ուրիշ անախորժություններով էին զբաղված»[30], իսկ Ղզլարի պարետը բաց է թողնում բանակցությունների հարմար ժամանակահատվածը, ինչը հանգեցնում է ողբերգության[31]:

Փաստորեն ռուսական իշխանությունները հրաժարվում են պահանջվող գումարը վճարելուց, և Ղզլարի պարետին այլ բան չէր մնում, քան թախանձագին նամակներով փորձել Ամիր-Համզային համոզել ազատ արձակել գիտնականին: Ղարաղայթաղի ուցմին, մերժում ստանալով, Ս. Գմելինին տեղափոխում է լեռներում գտնվող Մաջալիս գյուղը, որտեղ երիտասարդ գիտնականի առողջական վիճակը կտրուկ վատանում է: Այդ ընթացքում ազատ արձակված Ի. Միխայլովը և Ֆ. Բաուրը Ղզլարի ռուսական իշխանությունների և ուցմիի միջև միջնորդ-բանակցողների դերակատարությունն էին ստանձնել: Իրենց զեկուցագրում նրանք նշում էին, որ Ս. Գմելինի մահվան գիշերը (Ահմեդ-քենդում) սարսափած սպասում էին, որ ուցմին կվաճառի իրենց ստրկության[32]: Սակայն Ամիր-Համզան ազատ է արձակում բոլորին՝ թույլ տալով դին տեղափոխել: Բայց հրամայում է փոխանցել Ղզլարի պարետին, որ հետայսու թալանելու է ռուսներին և թույլ չի տալու

---

[29] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля. Чтения в императорском обществе истории и древностей российских при московском университете, 1867, июль-сентябрь, кн. 3-я, Москва, 1867, стр. 11-16.

[30] Նա ակտիվորեն միջամտում էր կովկասյան տիրակալների ներքին գործերին և սրում ներքաղաքական իրավիճակը տարածաշրջանում:

[31] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля, стр. 11.

[32] Նույն տեղում, էջ 13-14:

անցնել ուցմիության տարածքներով մինչև որ չլուծվի փախստականների հարցը[33]:

Մաջալիս գյուղում ուցմիի հավատարիմ մարդիկ զննում են Ս. Գմելինի մարմինը՝ ստուգելու համար մահվան մասին արշավախմբի անդամների պնդումները[34]: Այս փաստը հերթական անգամ վկայում էր, որ կովկասյան տիրակալները չէին վստահում ռուսական իշխանություններին:

Հասնելով Ահմեդքենդ՝ Ի. Միխայլովն ու Ֆ. Բաուրը հասկանում են, որ հուլիսյան տապին դիակը չեն կարող հասցնել Ղզլար և Ս. Գմելինին հենց այդտեղ էլ հուղարկավորում են: Օգոստոսի 1-ին արշավախմբի անդամները և ուղեկցող կազակները հասնում են Ղզլար[35]: «Որբացած» արշավախումբը դիմում է գիտությունների կայսերական ակադեմիայի հանձնաժողովին՝ վճռելու արշավախմբի ճակատագիրը: Այդ ընթացքում Ս. Գմելինի մյուս աշակերտները՝ Կառլ Հաբլիցը գտնվում էր Գիլանում, իսկ Սոկոլովն ու Մոշկովը՝ Աստրախանում:

Ս. Գմելինի մարմինն այդպես էլ չի տեղափոխվում Ռուսաստան, և միայն մոտ մեկ դար անց՝ 1861 թ., ակադեմիկոս Բ. Դոռնը (1805-1881 թթ.) այցելում է Դաղստան: Նա գիտնականի թաղման ենթադրյալ վայրում՝ Դերբենդից 50 վերստ հեռավորության վրա գտնվող Կայաքենդ (Ահմեդքենդ) գյուղի մոտ, գերեզմանաքար է տեղադրում, որը 1903 թ. վերականգնվում է:

Առաջին հայացքից թվում է, թե կայսերական ամենաբարձր մակարդակով կազմակերպված և հովանավորվող գիտական արշավախումբն անմիջապես պետք է օգնություն ստանար ռուսական պետությունից: Սակայն արշավախմբի ղեկավար ակադեմիկոս Ս. Գմելինի գերեվարումը և մահն Արևելյան Այսրկովկաս Ռուսական կայսրության ռազմական ներխուժման համար առիթ էին ծառայել (1775 թ.): Ավելին, Եկատերինա Բ-ի՝ Կովկասյան գծի ռուսական զորքերի հրամանատար գեներալ դը Մեդեմին 1774 թ. սեպտեմբերի 5-ին գրած ցուցումներում, կատարված փաստին անդրադառնալով, նշում է, որ դաղստանյան

---

[33] Նույն տեղում, էջ 14:

[34] Նույն տեղում:

[35] О смерти академика С. Г. Г. Гмелина в плену у одного горского кавказского владетеля, стр. 14.

տիրակալները և «պարսկական ղեկավարները» կովկասյան լեռնական ժողովուրդների հյուրընկալության սովորույթի խախտում են թույլ տվել[36]: Հաշվի առնելով այսրկովկասյան խնդիրների լուծման գործում դաղստանյան տիրակալների դերակատարությունը՝ կայսրության հպատակի նկատմամբ ուցմիի անհարգալից վերաբերմունքն արժանանում էր «մեղմ» գնահատականի:

Ակադեմիկոս Ս. Գմելինի «Ճանապարհորդություն» վերտառությամբ բազմահատոր աշխատությունը հրատարակվել էր դեռևս նրա ճանապարհորդության ընթացքում գերմաներենով 1770-1784 թթ. և կազմել 4 մաս, 5 գիրք: Կայսերական ակադեմիան աշխատությունը 1771-1785 թթ. նույն ծավալով թարգմանաբար ներկայացրել է նաև ռուս ընթերցողին:

Ճանապարհորդության ողջ ընթացքում Ս. Գմելինը ստիպված էր խստորեն հետևել Ակադեմիայի հանձնարարություններին և պահանջներին՝ օրական գրառումներ կատարելով և պարբերաբար դրանք Սանկտ Պետերբուրգ ուղարկելով: Անշուշտ, բոլոր ժամանակներում ճանապարհորդները գրի են առել իրենց ուղեգրությունները, սակայն Ս. Գմելինի հաղորդումները լոկ սիրողական և ճանաչողական բնույթի գրառումներ չէին: Դրանք հավաստի տեղեկությունների հիման վրա կատարված գիտական ուսումնասիրություններ էին՝ հասցեագրված կայսերական ակադեմիային հաշվետվությունների տեսքով:

Արշավախմբի աշխատանքների արդյունքում հանրության արժեք են դառնում հետազոտության ենթակա երկրների ժողովուրդների ազգագրությանը, պատմությանը, սովորույթներին վերաբերող նյութեր, բացահայտում հոգևոր և նյութական արժեքները: Ս. Գմելինի արշավախումբը հետազոտում է հսկայական մի տարածք՝ Պետերբուրգից մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը և Իրանի հյուսիսային շրջանները: Նա մեծ դժվարությամբ է կարողանում ուսումնասիրել տեղանքի աշխարհագրական դիրքը, բնական հանածոները, կենդանական ու բուսական աշխարհի մինչ այդ հայտնի ու անհայտ տեսակների մասին

---

[36] Сборник Императорского русского исторического общества, т. 135, СПб., 1911, стр. 210.

տեղեկությունները՝ դրանք ուղեկցելով նկարագրդումներով և գծապատկերներով:

Վերջապես, Ս. Գմելինի ջանքերով Ռուսական կայսրությունում սկիզբ է առնում Արևելյան Այսրկովկասի ակադեմիական ուսումնասիրությունը՝ հաջորդ հարյուրամյակում դառնալով ռուսական կովկասագիտության հիմքերից մեկը:

MKHITARYAN GOHAR

S. GMELIN'S TRAVEL TO THE EASTERN TRANSCAUCASIA AND NORTHERN REGIONS OF IRAN

During the Russo-Turkish War (1768–1774) the expedition organized by the Russian Imperial Academy of Sciences building in Saint Petersburg, in the person of S. Gmelin, for research purposes explored the western shores of the Caspian Sea and the northern regions of Iran. As a result of their research, the ethnography, history and the materials on the customs of the people of these territories are accepted as public value, the spiritual and material values are revealed as well.

During the study of the northern provinces of Iran and the Eastern Transcaucasia the expedition had to overcome many obstacles by putting S. Gmelin's life on the line.